



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

08 ապրիլի 2013 թվականի N 127-Ա

ք.Հրազդան

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱՋԵՑՄԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԹԻՄ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» և «գ» կետերի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 7-ի N 281-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 26-ի N 01/17/4978-12 հանձնարարականի և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N 100-Ա հրամանի պահանջների՝ **որոշում եմ**.

1. Ստեղծել աղետների ռիսկերի նվազեցման մարզային թիմ՝ (այսուհետ ԱՌՆ մարզային թիմ):

2. Հաստատել՝

1) ԱՌՆ մարզային թիմի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) ԱՌՆ մարզային թիմի աշխատակարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

3. Լիազորել ԱՌՆ մարզային թիմին՝

1) ապահովել նպաստավոր միջավայր աղետների ռիսկի նվազեցման մարզային և համայնքային խնդիրներով զբաղվող բոլոր շահագրգիռ կառույցների համար՝ աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարության և Հյուսիսային գործողությունների ծրագրի առավել արդյունավետ իրականացման նպատակով,

2) ներկայացնել աղետների ռիսկի նվազեցման մարզային և համայնքային խնդիրները աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմում՝ մասնակցային եղանակով որոշել լուծման ճանապարհները և հետամուտ լինել դրանց իրականացմանը,

3) նպաստել և օժանդակել աղետների ռիսկի նվազեցման գործառույթների իրականացմանը մարզային և համայնքային մակարդակներում:

4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի՝ արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառը համակարգող տեղակալին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



Ն.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ



ԿԱԶՄ

Աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմի

Թիմի ղեկավար՝

1. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ:

Թիմի անդամներ՝

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ,
3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ,
4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ,
5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ,
6. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ,
7. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ,
8. <<Կոտայքի հրշեջ փրկարարական կամավորական միավորում>> հասարակական կազմակերպության ղեկավար (իր համաձայնությամբ),
9. Մարզի հոգևոր թեմի լիազոր ներկայացուցիչ (հոգևոր թեմի առաջնորդի համաձայնությամբ):